

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

ՄԱՍԼՈ ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

03 սեպտեմբերի, 2014թ., Երևան

Մրցունակության համաշխարհային զեկուլյցի համաձայն Հայաստանն իր մրցունակությամբ 85-րդն է աշխարհի 144 երկրների մեջ

Համաշխարհային մրցունակության զեկուլյցը իր վերլուծություններն ամփոփում և համեմատվող երկրներին դասակարգում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Վերջինս մշակվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից: ՀԱՄ ցուցիչը, հաշվարկվելով մրցունակության 12 հենասյուների հիման վրա, երկրների մրցունակության ամփոփ գնահատական է տալիս:

Վարկանիշերի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների հարցումը տարեկան կտրվածքով իրականացվում է ՄՀ2-ում ներառված երկրներում՝ ՀՏՖ-ի և Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունների կողմից:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես ՀՏՖ Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր Հայաստանում, ներկայացնում է «Համաշխարհային մրցունակության զեկուլյց 2014/15»-ի հիմնական արդյունքները:

2014/15 զեկուլյցի արդյունքներով Ճվեյցարիան շարունակում է պահպանել առաջատարի դիրքը: Մրցունակությամբ առաջին հնգյակում են նաև Սինգապուրը, ԱՄՆ, Ֆինլանդիան և Գերմանիան:

ԱՊՀ տարածաշրջանի (ներառյալ Վրաստանը) երկրների խմբում զգալի առաջընթաց են արձանագրել Դոլըզստանը (13 կետով), Ռուսաստանը (11 կետով) և Ուկրաինան (8 կետով): Հայաստանը գրանցել է հետընթաց 6 կետով:

Համաշխարհային մրցունակության համաթիվ

	2014-2015 144 երկրների շարքում	2013-2014 148 երկրների շարքում	Փոփոխություն
Ադրբեջան	38	39	+1
Ղազախստան	50	50	0
Ռուսաստան	53	64	+11
Վրաստան	69	72	+3
Ուկրաինա	76	84	+8
Մոլդովա	82	89	+7
Հայաստան	85	79	-6
Տաջիկստան	91	-	-
Դոլըզստան	108	121	+13

2014-2015 թթ. Մրցունակության համաշխարհային զեկուլյցում (ՄՀ2) Հայաստանը 144 երկրների մեջ գրավում է 85-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ դիրքն իջեցնելով 6 տեղով: Առաջընթաց են գրանցել ենթակառուցվածքների, բարձրագույն կրթության և տեխնոլոգիական պատրաստվածության հենասյունները: Միևնույն ժամանակ վատթարացել են մնացած հենասյունների ցուցանիշները: Մասնավորապես ավելի քան 20 կետով վատթարացել են աշխատուժի շուկայի արդյունավետության և ֆինանսական շուկայի զարգացվածության հենասյունների ցուցանիշները:

Հայաստանի մրցունակության հենասյունների փոփոխությունները

ՀԱՄ հենասյունները	ՀԱՄ 2014-15 տեղ 144 երկրների շարքում	ՀԱՄ 2013-14 տեղ 148 երկրների շարքում	Փոփոխություն
Ինստիտուտներ	72	65	-7
Ենթակառուցվածքներ	78	80	+2
Մակրոտնտեսական միջավայր/կայունություն	77	64	-13
Առողջապահություն և տարրական կրթություն	99	85	-14
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	75	77	+2
Ապրանքների շուկայի արդյունավետություն	64	58	-6
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	74	50	-24
Ֆինանսական շուկայի զարգացվածություն	97	76	-21
Տեխնոլոգիական պատրաստվածություն	71	72	+1
Ծուկայի չափ	118	117	-1
Գործարարության կատարելագործվածություն	93	87	-6
Նորարարություն	104	103	-1

Ըստ առանձին ցուցանիշների զգալի բարելավվել են տեղական մրցակցության ուժգնության, նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի քանակի, բջջային կապի հասանելիության, ինտերնետից օգտվողների թվի և դպրոցներում ինտերնետի հասանելիության ցուցանիշները: Վատթարացել են գնաճի (2013թ.տվյալներն են), ֆինանսական միջոցների հասանելիության, օտարերկրյա ուղղակի ներդրումների միջոցով տեխնոլոգիաների փոխանցման, քլաստերային զարգացման, և իրավական դաշտի ցուցանիշները:

Ցուցանիշ	Փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, տեղ	Ցուցանիշ	Փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, տեղ
ՁԻԱՀ-ի տարածվածությունը, % չափահաս բնակչության մեջ	44	Գնաճը	-103*
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի քանակը	25	Գյուղատնտեսական քաղաքականության ծախսերը	-34

Ցուցանիշ	Փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, տեղ	Ցուցանիշ	Փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, տեղ
Տեղական մրցակցության ուժգնությունը	17	Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը	-31
Ինտերնետից օգտվողների թիվը	13	Քլաստերային զարգացումը	-29
ՁԻԱՅ-ի ազդեցությունը գործարարության ծախսերի վրա	13	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ և տեխնոլոգիաների փոխանցումը	-29
Բջջային կապի հասանելիություն	10	Աշխատավարձերի սահմանման ճկունությունը	-27
Դպրոցներում ինտերնետի հասանելիությունը	10	Իրավական դաշտի կարողությունը բողոքարկելու կառավարության որոշումները	-22
Միջնակարգ կրթության մեջ ներգրավվածությունը	10	Նորարարության կարողությունը	-21

*Ծանոթագրություն. Այս տարվա զեկույցում օգտագործվել է 2013թ. Հայաստանի գնաճի ցուցանիշը (5.8%), որով երկիրը դասվել է 104-րդ տեղում: Նախորդ զեկույցում Հայաստանի գնաճի ցուցանիշը կազմել է 2.7% (2012թ. տվյալներով) և Հայաստանը դասվել է առաջին տեղում, քանի որ մինչև 2.9% գնաճ ունեցող բոլոր երկրները դասակարգվում են առաջին տեղում

Նոր բիզնես սկսելու հետ կապված գործընթացների և ժամկետների բնագավառը հաստատուն կերպով ներկայանում է Հայաստանի ուշագրավ առավելությունների շարքում: Մրցակցային թերությունները այնպիսի կարևոր ոլորտներում են, ինչպիսիք են արտահանումը և երկրում տաղանդների պահպանումը:

Հայաստանի մրցունակության առավելություններն ու թերությունները

Ուշագրավ առավելություններ	Տեղ	Ուշագրավ թերություններ	Տեղ
ՁԻԱՅ-ի տարածվածությունը, % չափահաս բնակչության մեջ	1	Նավահանգստային ենթակառուցվածքի որակը	134
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործընթացների քանակը	3	ՀՆԱ-ի մեջ արտահանման մասնաբաժինը	127
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի քանակը	9	Արտաքին շուկայի չափի համաթիվը	126
Ներդրողների իրավական պաշտպանվածության մակարդակը	22	Երկրի կարողությունը ձեռք բերել և պահպանել տաղանդներ	123
Հանցագործության հետ կապված ծախսերը գործարարության համար	22	Առաջադեմ տեխնոլոգիական ապրանքների ձեռքբերումը կառավարության կողմից	121

Ուշագրավ է, որ չնայած ՀԱՄ ցուցանիշի նվազմանը, Հայաստանը միջանկյալ փուլից անցում է կատարել դեպի արդյունավետության վրա հիմնված փուլ, շնորհիվ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճին (2,991 ԱՄՆ դոլարից 3,208 ԱՄՆ դոլար 2012-2013 թթ.): Սա նշանակում է, որ զարգացման այս փուլում փոխվում են Հայաստանի առջև եղած մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները: Չարգացման արդյունավետության փուլում գտնվող երկրների հիմնական մարտահրավերը արտադրողականության աճն է:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Երևան 0010, Մելիք Աղամյան 2/1

Յեռ.՝ +37410 546434

Էլ-փոստ՝ info@ev.am,

www.ev.am, www.evconsulting.am